ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-2»

ք.Վեդի « 19 » փետրվարի 2018թ.

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մաթևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Թագեսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **607940 (վեց հարյուր յոթ հազար ինը հարյուր քառասուն)** ՀՀ դրամ:
Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնօրյա աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վեղու ծննդատուն» ՓԲԸ	**«ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ**
ք.Վեղի, Գայի 1	ք. Երևան, Արզումանյան 19/67
ԱՇԻԲ Վեղի մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247763031777	Հ/Հ 1570025800310100
ՀՎՀՀ՝ 04104551	ՀՎՀՀ 01239302
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան	Տնօրեն՝ Մ. Թագեվյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
« 19 » փետրվարի 2018թ. կնքված
N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-18/10-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

Հ/Բ	CVP կոդ	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
9	39831243	Լվացքի փոշի ավտոմատ, **Peros**	Peros ապրանքանիշի արտադրության, Թուրքիա	Լվացքի փոշի ավտոմատ (կգ) Բաղադրությունը՝ -մինչև 5% պոլիկարբոքսիլներ պարունակող կատրիոնային արտաքին ակտիվ նյութերից (ԱԱՆ), 5-15 % թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30 % -անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը՝ ըստ կիրառված հոտավորիչի, բուտիլֆենիլմեթիլպրոպան, լինալոլ: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե կամ	կգ	735	132300	180	ք.Վեղի, Գայի 1	180	
10	39831243	Լվացքի փոշի մանկական 400գր. Փաթեթավորմամբ, **«УШАСТЫ НЯНЬ»**	Նևսկի կոսմետիկ ՍՊԸ, ՌԴ	Լվացքի փոշի մանկական սպիտակեղենի ավտոմատ լվացման համար:Փաթեթավորումը՝ ստվարաթղթե՝ 400գր:	տուփ	450	45000	100	Ստարտյոր	100	
11	39831280	Ապակու մաքրման հեղուկ միջոց 500մլ **<<Radyga>>**	Քլիմ Ֆոամ ՍՊԸ, Հայաստան	Բաղադրությունը Ջուր , ՄԱՆ, սպիրտեր, հոտավետ նյութեր, գունանյութ: 500մլ	հատ	270	1620	6	ք.Վեղի, Գայի 1	6	
12	39831283	Հատակի մաքրման լաթ 65x90	ԱՄԵ, ԱՄԵ	բամբակյա գործվածքից լաթեր՝ հատակը լվանալու համար չափերը՝ 65x90 սմ	հատ	375	15000	40	ք.Վեղի, Գայի 1	40	
13	39831281	Ապակի մաքրման լաթ	ԱՄԵ, ԱՄԵ	Լաթ՝ փափուկ կտորից, հեշտ քամվող, ապակյա և լաքապատ մակերեսներն առանց հետքի մաքրելու համար՝ 30սմx30սմ	հատ	350	3500	10	ք.Վեղի, Գայի 1	10	
20	19641000	Պոլիէթիլենային տոպրակներ, պարկեր 60լ,**<<Նոր Աստղ>>**	Նոր Աստղ ՍՊԸ, Հայաստան	Պոլիէթիլենային տոպրակ աղբի համար, պատրաստված բարձր ճնշման պոլիէթիլենից, որի հաստությունը կազմում է 45 մկմ, 60լ: Փաթեթավորված օղակաձև, փաթեթում 20 հատ, գույնը սև:	հատ	12	8400	700	ք.Վեղի, Գայի 1	700	
30	31651400	Մեկուսիչ ժապավեն (իզոլենտ) **«Vini Tape»**	Vinitape ապրանքանիշի արտադրության, Ճապոնիա	Հոսանքի մեկուսացման համար, գլանափաթեթներ -ով պոլիմերային ժապավեն, կապույտ, սպիտակ կամ սև գույնի	հատ	125	2500	20	ք.Վեղի, Գայի 1	20	
33	44420000	Խծուծ (պակլի մեծ) **<<Tenuta Filetti>>**	Tenuta Filetti ապրանքանիշի արտադրության Չինաստան	Պոլիէթիլենային ժապավեն, նախատեսված խողովակների ծորակների համար, որպես խցուկ, մեծ չափի	հատ	140	1400	10	ք.Վեղի, Գայի 1	10	
34	42131100	Առկո փական 1/2" **<<Arko>>**	Arko ապրանքանիշի արտադրության, Չինաստան	Առկո փական ½ նիկելա -պատ 10 սմ	հատ	1350	40500	30	ք.Վեղի, Գայի 1	30	

35	44411110	Ջրի ծորակ 1 փականով <<King Star>>	King Star ապրանքանիշի արտադրության, Չինաստան	կիսաշրջանաձև. Մեկ փականով, պլաստմասե, գույնը սպիտակ, լվացարանի վրա տեղադրելու համար	հատ	1375	41250	30	ք.Վեղի, Գայի 1	30	
37	44521120	Դռան կախովի փական «EXTRA»	EXTRA ապրանքանիշի արտադրությանՉ հնաստան	Կախովի փական միջին չափսի `N70,	հատ	1000	5000	5	ք.Վեղի, Գայի 1	5	
39	44522400	Դռան ներսի փականի միջուկ «Ruita»	Ruita ապրանքանիշի արտադրության Չինաստան	Դռան ներդրովի փականի միջուկ / երկարությունը՝ 8սմ/՝ 180 գ-ից ոչ պակաս	հատ	2200	66000	30	ք.Վեղի, Գայի 1	30	պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ.
40	44512910	Գայլիկոն (պաբեդիտ) <<HSS>>	HSS ապրանքանիշի արտադրության, Չինաստան	Գայլիկոն (պաբեդիտ) 12մմ	հատ	450	9000	20	ք.Վեղի, Գայի 1	20	
41	44512910	Գայլիկոն (երկաթի) <<HSS>>	HSS ապրանքանիշի արտադրության, Չինաստան	Գայլիկոն (երկաթի) 12մմ	հատ	700	14000	20	ք.Վեղի, Գայի 1	20	
44	31531210	Էլեկտրական լամպ 100W **«Калашниково»**	Калашниково ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Էլեկ.(220-230) Վ լարման, 50Հց հաճախականության,100Վտ հզորությամբ,թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի:	հատ	93.5	93500	1000	ք.Վեղի, Գայի 1	1000	
48	31531300	Տնտեսող լամպեր, 95 վտ, 260 մմ, E27, 220Վ <<Torch>>	Torch ապրանքանիշի արտադրության, Չինաստան	Տնտեսող լամպեր, Էլեկ.(220-230) Վ լարման, 50Հց հաճախականության, 95 W հզորությամբ	հատ	2195	13170	6	ք.Վեղի, Գայի 1	6	
51	31588100	Վարդակ ներքին մոնտաժման հողանցումով միաբևեռ, <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Վարդակ ներքին մոնտաժման հողանցումով միաբևեռ,	հատ	580	11600	20	ք.Վեղի, Գայի 1	20	
53	31588400	Վարդակ արտաքին մոնտաժման միաբևեռ <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Վարդակ արտաքին մոնտաժման միաբևեռ	հատ	420	8400	20	ք.Վեղի, Գայի 1	20	
54	31588200	Վարդակ արտաքին մոնտաժման երկբևեռ <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Վարդակ արտաքին մոնտաժման երկբևեռ	հատ	610	12200	20	ք.Վեղի, Գայի 1	20	
55	31214200	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 1 ստեղն <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 1 ստեղն,	հատ	420	8400	20	ք.Վեղի, Գայի 1	20	
56	31214200	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 2 ստեղն, <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 2 ստեղն,	հատ	460	9200	20	ք.Վեղի, Գայի 1	20	
57	31214200	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 1 ստեղն <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 1 ստեղն,	հատ	520	10400	20	ք.Վեղի, Գայի 1	20	

58	31214200	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 2 ստեղն, <<IEK>>	IEK ապրանքանիշի արտադրության, ՌԴ	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 2 ստեղն,	հատ	580	11600	20	ք.Վեդի, Գայի 1	20
60	44322230	Հոսանքի պղնձե լար 4մմ, EVRO Kabel	Evro kabel ապրանքանիշի արտադրության, Հայաստան	Մոնտաժային լար անազապատ պղնձե ջղերով, պոլիվինիլքլորիդային մեկուսացմամբ բազմաջիղ հաղորդալար 4մմ	մետր	270	27000	100	ք.Վեդի, Գայի 1	100
61	44322220	Հոսանքի պղնձե լար 2.5մմ, EVRO Kabel	Evro kabel ապրանքանիշի արտադրության, Հայաստան	Մոնտաժային լար անազապատ պղնձե ջղերով, պոլիվինիլքլորիդային մեկուսացմամբ բազմաջիղ հաղորդալար 2.5 մմ	մետր	170	17000	100	ք.Վեդի, Գայի 1	100
ԸՆԴԱՄԵՆԸ				***	***	***	607940	***	***	***

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
ԱՇԻԲ Վեդի մ/ճ
Հ/Հ՝ 247763031777
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

/ստորագրություն/ Կ.S

ՎԱՃԱՌՈՂ
«ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 19/67
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700025800310100
ՀՎՀՀ 01239302
Տնօրեն՝ Ա. Թադևոսյան

/ստորագրություն/ Կ.S

«ՌԵԱՔԻՄ»
«РЕАХИМ»
«REACHEM»
01239302
L-05

Հավելված N
«19» փետրվարի 2018թ. կնքված
N ՎՄ-ԳՀԱՊՁԲ-18/10-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
9	39831243	Լվացքի փոշի ավտոմատ, Peros	0	0	0	19845	39690	52920	66150	79380	92610	105840	119070	132300	132300
10	39831243	Լվացքի փոշի մանկական 400գր. Փաթեթավորմամբ, «УШАСТЫ НЯНЬ»	0	0	0	6750	13500	18000	22500	27000	31500	36000	40500	45000	45000
11	39831280	Ապակու մաքրման հեղուկ միջոց 500մլ <<Radyga>>	0	0	0	243	486	648	810	972	1134	1296	1458	1620	1620
12	39831283	Հատակի մաքրման լաթ 65x90	0	0	0	2250	4500	6000	7500	9000	10500	12000	13500	15000	15000
13	39831281	Ապակի մաքրման լաթ	0	0	0	525	1050	1400	1750	2100	2450	2800	3150	3500	3500
20	19641000	Պոլիէթիլենային տոպրակներ, պարկեր 60լ,<<Նոր Աստղ>>	0	0	0	1260	2520	3360	4200	5040	5880	6720	7560	8400	8400
30	31651400	Մեկուսիչ ժապավեն (իզոլենտ) «Vini Tape»	0	0	0	375	750	1000	1250	1500	1750	2000	2250	2500	2500
33	44420000	Խծուծ (պակլի մեծ) <<Tenuta Filetti>>	0	0	0	210	420	560	700	840	980	1120	1260	1400	1400
34	42131100	Առկո փական 1/2" <<Arko>>	0	0	0	6075	12150	16200	20250	24300	28350	32400	36450	40500	40500
35	44411110	Ջրի ծորակ 1 փականով <<King Star>>	0	0	0	6187,5	12375	16500	20625	24750	28875	33000	37125	41250	41250
37	44521120	Դռան կախովի փական «EXTRA»	0	0	0	750	1500	2000	2500	3000	3500	4000	4500	5000	5000
39	44522400	Դռան ներսի փականի միջուկ «Ruita»	0	0	0	9900	19800	26400	33000	39600	46200	52800	59400	66000	66000
40	44512910	Գայլիկոն (պաբեդիտ) <<HSS>>	0	0	0	1350	2700	3600	4500	5400	6300	7200	8100	9000	9000
41	44512910	Գայլիկոն (երկաթի) <<HSS>>	0	0	0	2100	4200	5600	7000	8400	9800	11200	12600	14000	14000

44	31531210	Էլեկտրական լամպ 100W	0	0	0	14025	28050	37400	46750	56100	65450	74800	84150	93500	93500
48	31531300	Տնտեսող լամպեր, 95 վտ, 260 մմ, E27, 220Վ <<Torch>>	0	0	0	1975,5	3951	5268	6585	7902	9219	10536	11853	13170	13170
51	31588100	Կարդակ ներքին մոնտաժման հողանցումով միաբևեռ, <<IEK>>	0	0	0	1740	3480	4640	5800	6960	8120	9280	10440	11600	11600
53	31588400	Կարդակ արտաքին մոնտաժման միաբևեռ <<IEK>>	0	0	0	1260	2520	3360	4200	5040	5880	6720	7560	8400	8400
54	31588200	Կարդակ արտաքին մոնտաժման երկբևեռ <<IEK>>	0	0	0	1830	3660	4880	6100	7320	8540	9760	10980	12200	12200
55	31214200	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 1 ստեղն <<IEK>>	0	0	0	1260	2520	3360	4200	5040	5880	6720	7560	8400	8400
56	31214200	Էլ. անջատիչներ արտաքին մոնտաժման 2 ստեղն, <<IEK>>	0	0	0	1380	2760	3680	4600	5520	6440	7360	8280	9200	9200
57	31214200	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 1 ստեղն <<IEK>>	0	0	0	1560	3120	4160	5200	6240	7280	8320	9360	10400	10400
58	31214200	Էլ. անջատիչներ ներքին մոնտաժման 2 ստեղն, <<IEK>>	0	0	0	1740	3480	4640	5800	6960	8120	9280	10440	11600	11600
60	44322230	Հոսանքի պղնձե լար 4մմ, EVRO Kabel	0	0	0	4050	8100	10800	13500	16200	18900	21600	24300	27000	27000
61	44322220	Հոսանքի պղնձե լար 2.5մմ, EVRO Kabel	0	0	0	2550	5100	6800	8500	10200	11900	13600	15300	17000	17000
ԸՆԴԱՄԵՆԸ			0	0	0	91191	182382	243176	303970	364764	425558	486352	547146	607940	607940

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
ԱՇԻՄ Վեդի մ/ճ
Հ/Հ՝ 247763031777
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրեն՝ Վ. Սարգսյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 19/67
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700025800310100
ՀՎՀՀ 01239302
Տնօրեն՝ Մ. Թագեսյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
« 19 » « փետրվարի » 2018 թ. կնքված
N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 19/67
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025800310100
ՀՎՀՀ 01239302

Պատվիրատու
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.վեդի, Գայի 1
hh 247763031777
ԱՇԻԲ, Վեդի մ/ճ
Հվhh 04104551

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 19 » « հունվարի » 2018 թ.

Պայմանագրի համարը՝ ՎԾ-ԳՀԱՊՁԲ-18/10-2

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2018թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-2» ծածկագրով պայմանագրի
«19» «փետրվարի» 2018 թ. կնքված

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն